

րից, դաստակից և թաթից, իսկ լեռին ոտները—ազդրից, ոլոգից ու ներ-
բանից. ոլոգների վերև գտնուում է փոքրիկ ծնկոսկրը» (բոլորովին վաղ ի
վերով խօսքեր. եթէ չէք կամեցել բոլոր ոսկորները թւել, գոնէ բաժան-
մունքները ճիշդ ասէիք): Զիտ ոտների մասին արժանի է գտնում նկատել
միայն. «Զիտ պինդ ու ուժեղ ոտները վերջանում են սմբակով, որը շատ
հաստ ու լայն է» (եր. 23). (իսկ որ աւելի նշանաւորն է և հետաքրքրելին՝
թէ ալդ սմբակը ինչ բան է, միւս կաթնասունների ծակերի ո՞ր մասին է
համապատասխանում, դորա մասին աւելորդ է համարել հեղինակը խօսել):
Ասացէք խնդրեմ, ինչ «հիմնաւոր և կանոնաւոր» հասկացողութիւն կարող է
կազմել ընթերցողը, հէնց օրինակի համար, կաթնասունների վերին և ներ-
քին անդամների կազմութեան մասին: Պէտք է նկատել, որ նոյնքան ան-
կատար են և միւս տեղեկութիւնները: Պ. Փիլօեանը ամին տեղ իր պարտքն
է համարում կրկնել. «Մարդու մարմինը կարմիր է և տաք» (եր. 10), «կատ-
ւի արիւնը տաք է և կարմիր, շնչում է թոքերով (եր. 14) (իսկ մարդը
ինչո՞վ): Հասնելով Շանը՝ էլի ասում է. «ճրա արիւնն էլ նոյնպէս տաք և
կարմիր է, շնչում է նոյնպէս թոքերով (եր. 17): Այսպէս, պարոնը ոչինչ հաս-
կացողութիւն չ'ունի կարգ ու կանոնի և դասադրքեր կազմելու մասին.
Կարծեմ բաւական է ինչքան խօսեցինք. եթէ քննենք բոլորը, պէտք է մի
նոյն հաստութեամբ, գուցէ և աւելի, գիրք գրենք:

Մի խօսքով, կարելի է ասել, որ պ. Ս. Փիլօեանի «Զրուցներ»-ը մի
ամենախալտաւակ, սգէտանձնալստահութեան, աֆէրիստական դործ է: Զը
նալած հեղինակի մեծ մեծ խօսքերին (տևս Աղլ), նա ոչ միայն ալդ դասա-
դրքով չէ կարող «լցուցանել թերին իւր փոքրիկ և հասակաւոր ընթեր-
ցատէրների մտաւոր զարգացման մեծ խնդրում», ալ նաև կարող է միայն
սկսողների մտքերում արուցանել կատարեալ խառնաշփոթութիւն և թերի,
ստոր կարծիք բնական պատմութեան մասին:

Լ. Ս.

Ս. ՓԻԼՕԵԱՆ. ԷԿՈՐԱԾ ՄԱՐԳԱՐԻՏԱ. Վէպ-նկարագիր Նոր-Բայազետի
վարք ու բարքի. Տփլիս. Տպարան Մ. Դ. Ռօտինեանցի, 1888 թ.
8-ճալ, 175 եր. տառ №12, գինն է 50 կոպէկ:

Այդ գրքովը մի բաւական գեղեցիկ և բազմակողմանի նկարագիր է
է Սեանալ լճի մօտ գտանող այն ծաղկաւէտ, կանաչադարձ ու աղբերա-
ւատ զիւղաքաղաքի, ուր օդի մեղմութիւնը «անմահական» աղբիւրների
ջրերի հետ միասին՝ պարզեւել են օրէօկչեցի» հալին առողջ, վայելուչ
կազմաւածք, առողջ և գեղեցիկ պատկեր, կորովի սիրտ և ուրախ, դարձա-
սէր բնաւորութիւն: Այնտեղ ջերմեռանդ ու խոտաբնացութեան հետ կապած
մշտական քէֆն ու ուրախութիւնը, զուռնան ու նաղարան, երգն ու պարը վերջ

չունին. անտեղ հարսանիքը, իւր նահապետական պարզութեամբը, վեց-եօթեօր է տեսում: Բնութեան այդ գեղեցիկ գողում սէրն էլ բոլորն է և վեհ: Անտեղ սիրող սրտերը, եթէ խոչընդոտների են հանդիպում, իրանց զուլսը մահու են մատնում անխռով ու անտրտունջ: Եւ իրաւ, գրքովի հերոսների՝ Սմբատի ու Մարգարտի սէրը աննման է: Տեսարանները, մանաւանդ զընայով վերջը, անքան սրտաշարժ են, որ դժար է արցունքը բռնել: Սըրտաշարժութեան կողմից կարելի է համեմատել այդ վէպիկը «Կարմէն Սիւլվա»-ի (Ռումինիայի թագուհու) գողտրիկ վէպիկների հետ:

Ցաւալի է միայն, որ լիզուն (չեմ խօսում տեղական բարբառի մասին) վերին աստիճան անմշակ և զուրկ է քերականական տարրական կանոններից: Օրինակ՝ «Նոր-Բալագէտը, որ պարծենում է իւր հովասուն օղով և առողջ ջրերով, ահա խաչերի ջրերն են միւս բազմաթիւ աղբիւրների մէջ առաջին տեղը բռնում, որ ստորերկրեայ խողովակներով ճիւղաւորուած ցրում է քաղաքի մէջ և այլ տեղեր» (եր. 129): Մարդ մնում է շարւած: Գլխաւոր նախադասութիւնը, միջանկեալով ընդհատուելոց փառոյ, չէ վերջանում, սկսում է նոր գլխաւոր նախադասութիւն: Անուն բալին լոգնակի, բալը եղակի դրած և այլն. համաձայնութեան (syntaxe) հոտն անգամ չը կալ: Մատենագիրը չը պիտի գուհկացնէ իւր լիզուն. ընդհակառակն, նորա ուղղակի կոչումն է՝ ժողովրդին կանոնաւոր լիզուի՝ ընտելացնելով՝ կանոնաւոր մտածելու վարժեցնել:

Յ. Լ.

«ԸՆՏԻՐ ՀԱՏՈՒԱԾՆԵՐ» (Քրեաթումաթիայ). Հայ դպրոցների համար: Ա. մասն.—Արձակ. երկրորդ տպագրութիւն (հարիւր նոր հատուածով). յօրինեց Յովհաննէս Նաղարեանց: Թիֆլիս: Տպարան Մարտիրոսեանցի, 1889 թ. 504 երես., տառ № 12, գինն է 1 ր. 25 կոպ.

Գրքիս յօրինողը կամ առաւել ճիշդ ասելով՝ կաղմողը, արդէն ծանօթ է մեր գրականութեան մէջ իբրեւ հեղինակ հակելն լիզուի դասագրերի: Անծանօթ չէ մեր մանկավարժներին պ. Նաղարեանցի այս գործը, որի երկրորդ տպագրութեամբ լոյս տեսնելն արդէն մի առանձին գնահատութեան նշան պէտք է համարել, թէ և առաջին տպագրութեան ժամանակ (1883) պ. լօրինողը անպիսի հռչակահար միջոցների չէր դիմել, ինչպէս այժմ: Զեկուցողիս կարծիքով, աւելորդ էին գրքի սկզբում հրատարակւած երկու նպատաւոր քննադատութիւնները: Եթէ վեց տարի առաջ այս գիրքը ոչ մի փառաբանող լալտարարութեան (ռէկլամ) կարօտ չէր, անշուշտ նրա երկրորդ և ստաւարացրած տպագրութեան համար այժմ առաւել ևս աննպատակ են մի մանկավարժական ժողովի և կամ մի սոսկականի կարծիքը: Ընտրել հատուածները մի ժողովածու են դանաղան աղղալին և օտար մատենագիրների